

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 35

30 ՕԳՈՍՏՈՍ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՂԵՆՈՂ ՎԱՐՊԱԿԵՏ (ԽՐԱԳՐԱԿԱՆ) Տ. Ա. :—Գրական առաջարկություն մը. ՏԻԴՄՆ ԵԼ-
ՔԷՆՃԵԱՆ :—Անբարոյական գրականությունը. ԽՈՍՐՈՎ ՔԷՇԻՇԵԱՆ :—Շոգ Մոգ. «Ամուս-
նական գայթակղություններ». ՔՐԻՋԱՆԹԷՄ :—Տեսություն մը մեր եւ օտար բանաստեղծնե-
րուն վրայ. Ե. ՄԵՍԻԱՆՆԱՆ :—Նայումբը (Նոբալիեյ) ՓԱՅԼԱԿ :—Անհրեւոճ վերջալոյս.
Թարգմ. Մ. Ո. :—Խրագրական նօթեր :—Ոգեւարը (Բերբուլաճ) Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի սարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար հաւսուն դրո.
եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի : Արտասահման 12 ֆրանկ կամ
5 ռուբլի : Թղթասարական ծախքը Խրագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօրէ : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն Խրագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առա-
կութիւնները նկատողութեան չեն առնուի :
Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայ-
մաններով :

Զեռ-ՔԷԼԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՐԵԼԻՆ

Եթէ երախայ մը նիհար է և չի զաւարիլ ինչ, ախորժակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նէ, և ակույնները — որոնք չեն մեծնարկողը նէ — աչքն անկանապէս միւս աղետները կ'աւելցնեն թող իրեն տրուի:



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար ախորժակի կերակուր և դէղ մըն է, և երախայն զայն խմած ատեն վերջի ապտիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Այլըր շուտով կը տեսնեն թէ ինչպէս երախային բոլոր վիշտերը անվիջապէս կը դադրին, որպէս թէ նոր արիւն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները չնչելով մանկան ախտերը առողջութեան և զուարթութեան փոխադրեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուտելիք և) բնակելիքին և ախորժակով կըխմէ: Արեւիկի զաւարիլ և պղտիկ ճերմակ ակույնները առանձնաւոր և վիշտերու կ'ըրկին երեան իւրիւ: Ընթոթի Բաղադրութիւնը երախայից առողջարար գործութիւնն և զաւարիւմ կուտայ, մարսողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւն կը պատճառէ:

ԸՄԴՈԹԻ ԲԵՂԱԹՐՈՒԹԻՈՒՆ

Բոլոր տղայոց Սիրելին է և զանոնք շուտով վարդադոյն երեւոյթի և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փոխէ: Ընթոթի Բաղադրութիւնը միւսն այս նշանով վարդադոյն փաթեթի մէջ ծաղուած շիշերէն կը ձանջուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

20

Բոլոր գեղարքները և գեղարքները ինչպէս:

'AU TALON D'O', O TALON S'OR

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱՅՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերքու համար պատրաստուած

Կալաքա, Վոյլոնա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կոշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ շինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատուներ:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կրսն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչ կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԽԱՂԱՆԻՆԻ՝ Ձիւստտանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք սառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան զիմով կամ մուրջին զլուխը կրադրավաճառ Միսաք աղային:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻՆՆ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԻՆՆ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄՔՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՐԵՆԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՐԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ: ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՒ-րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	137,300,000	»

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- գլուխ եւ յիսուց հատուցում	282,000,000	»
--	-------------	---

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս	54,000,000	»
---	------------	---

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօփրուք խան, Բարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

Վարժարանիս նպատակն է տալ միջնակարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւելով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագրին: Նոյն ատեն ալ, սակայն, նկատի առնելով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզուներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ Ֆրանսերէնի: Ամենէն պղտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշակերտները կանուխէն ընտելանան Անգլիերէնի: Տօրէնը Տօքթ. Ջէյմսըրս կ'աւանդէ տնտեսականութեան դասը, որ մասնաւորապէս կը յարմարցնէ ընթացաւարտները գործնական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգամայն մոտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Դիտական ճիւղերու դասախօսութիւններն արդիւնաւորելու համար վարժարանը ունի պիտանի ու աւհրաժեշտ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը: Նորակառոյց նպատակայարմար շէնքը եւ նորասաց ընդարձակ հողերը ամէն ժամանակեաւելի նպաստաւոր են աշակերտներու հանգրստութեան եւ առողջութեան, զեղը Ըլալով արդէն հանրածանօթ իր մաքուր օդով եւ գեղեցիկ տեսարաններով:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տարեշրջան) տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր Երեքին (Ն. Տ.): Տարեթոշակն է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ՝ Պայպըլ-Հասուզ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պարտիզակ:

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԻՒՍԿԻՏԱՐ

Ամերիկեան Վարժարանի յառաջիկայ տարեշրջանը կը սկսի 1903 Սեպտ. 15ին (Ն. Տ.):

Գիշերօթիկներու տարեթոշակն է 35 օսմ. ոսկի: Ուսումնարանին չորս դասընթացքներուն համար, իսկ 30՝ նախակրթարանին համար:

Տնօրէնութիւնը ջանք չէ խնայած վարժարանը ամէն առաւելութիւններով օժտելու: Լաւագոյն դրութիւնով եւ մեծ յաջողակութիւնով կ'ուսուցուն Հայերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն, Գերմաներէն եւ դասական լեզուները, ինչպէս նաեւ ընական գիտութիւններ:

Հմուտ եւ վարժ հիւանդապահուհի մը աշակուղ հսկողութիւնը կը վայելեն աշակերտուհիները եւ կ'ապրին խաղաղ ու բարեկարգ մթնոլորտի մը մէջ:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել վարժարանին Տնօրէնուհի Տր. Փէթրիքի:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Վ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Յ Ճ Ի Ի Վ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադասեց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով իւնիոնի ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալսաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեանք գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԻՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրքը Օղլու

Մասնաճիւղ՝ Դալաթիա, Իսայէթ Խան, գործակալ Միհրան Էֆ. Դալիթեան:

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱՏԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61

Զրահեալ աբաղքիւն

Պալպալեան առէն օր ահռայի առէն տեւակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ահռաները: Յորեկները ահռայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղեւսներուն ձեռք

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեւակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-իւողոց, թիւ 13:

Հարիրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չաբաթական վճարում: Կանխիկ գումարին համար հարիրին 5 գեղջ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 գեղջով եւ կ'առնուին. իսկ ապառիկ զրեւոյցներէն՝ 100ին 15 գեղջով:

ՄԱՍԻՍ

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 35

30 ՕԳՈՍՏՈՍ 1903

ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ

Երուսաղեմի Եկեղեցւոյ Տեսչին թեր ու գէմ գրուածներուն մէջտեղ՝ վերջապէս հանդիպեցանք Թղթակցութեան մը որ՝ չի բաւականանալով համակրանքի ու վստահութեան պարզ արտայայտութեամբ մը Տ. Ղեւոնդ վարդապետին նկատմամբ, մէկիկ մէկիկ կը թուէ այդ բազմարդիւն եկեղեցականին կատարած գործերը՝ Վանքին ու Սիւրբանութեան օգաին։ Այդ յօդուածը որ «Հրաշեայ» ստորագրութիւնը կը կրէ և Պէրութէն ուղղուած է Բիւզանդիոնի, կ'արտապնէ ստորեւ իր պարունակած դրական ու բացորոշ տեղեկութիւններուն համար որոնք թուանշաններու և իրողութեանց վրայ հիմնուած են, իբրեւ համառօտ պատկերացոյց քառորդ դարու օրինակելի գործունէութեան մը զոր հազուադէպ է տեսնել ոչ միայն Երուսաղեմի, այլև մեր վանական ուրիշ հաստատութեանց միաբաններուն քով։ Ղեւոնդ վարդապետին հակառակորդները, թէ՛ հոս Լրագրութեան մէկ մասին մէջ և թէ՛ հոն Վանքին մէջ, անտեսել կը ձեռացնեն անոր չնորհիւ ձեռք բերուած նիւթական առաւելութիւնները ու մոռացութեան կոտան մատակարարական այն խանգարուած վիճակը որուն մատնուած էր Երուսաղեմի Վանքը, 1878ին, երբ պաշտօնի անցաւ Ելեւմբոյց Տեսուչը։ — այդ թուականին տակաւին երկրասարդ վարդապետ, նոյնքան լուրջ ու շրջահայեայ՝ որքան աշխոյժ ու դործօն։ Աշխատութեան ահադին դաշտ մը կը տեսնէր իր առջև, խոսքն դետին մը զոր հարկ էր մշակել, յարգարել, արդասաւորել։ Ղեւոնդ վարդապետ չի կնքեցաւ այս դժուարին գործին առջև, զոր համբերատար ողբով և իմաստուն մատակարարութեամբ ի գլուխ հա-

նեց։ Եւ իր ըարոյական վարձատրութիւնը կը գտնէ այսօր վարդապետներու խմբակի մը կողմէ որոնք ամէն հնարաւոր միջոցներով կ'ուզեն ամբաստանուածի, ղեղձանողի հանգամանք մը վերագրել այդ աղնիւ եկեղեցականին։ Ի՞նչ նշանակելի դործ տեսանարդեօք իրենք, այդ հակառակորդ միաբանները, այս քսանընիւթ տարուան երկար շրջանին մէջ, ի՞նչ կարելուր ծառայութիւն մատուցին Երուսաղեմի Վանքին ու Պատրիարքութեան, որ այսքան դժուար—գոյում հանելու իրաւունք մը կուտան ինքզինքնուն։ Ուստատեղիի մը հողեւոր տեսչութիւնը վարելը, առտու իրիկուն ժամերգութեան մասնակցելը այդքան մեծ անձնութիւն մըն է, որ ելեր Ղեւոնդ վարդապետի երեսին կու տան, իբր յանցանք մը, թէ «ժամ չիջնար» եղեր։ Բաւականէն աւելի կան իրենց մէջ՝ ժամ իջնողներ, ջերմեւանդօրէն երեսնին տաճարին մարմարներուն քաղներ, առատ խոնկ ու մոմ ծխողներ, եթէ այդքանը կը բաւէ մաքրակրօն եկեղեցական ըլլալու և իրենց արժանաւոր ու բազմաշխատ մէկ եղբայրակիցը գրչով ու խօսքով հալածելու համար անխղճօրէն։

Ճիշդ է որ Ղեւոնդ վարդապետ բարեպաշտի ու ջերմեւանդի հովեր չիտար ինքզինքին և «ես՝ տրուպա, մեղաւորս» կեղծաւոր ձեւերով խօսելու սովորութիւն չունի։ Ասկէ չի հետեւիր թէ իր եկեղեցին չի սիրեր, թէ ջերմ հաւատացեալ մը չէ ու իր հողեւորականի պարտականութեանց մէջ կը թերահայ։ Աւելի դործի մարդ քան աղօթքի, լուսակեաց, խոհուն, մեղուաջան աշխատող, օրն ի բուն և գիշերն ալ քանի մը ժամ իր

գրասեղանին առջև հակած, Ղեւոնդ վարդապետ Երուսաղէմի Վանքին վարչութեան ու մատակարարութեան հոգերովը կը զբաղի, որուն պատասխանատուութիւնը կը բաժնէ Պատրիարք Սրբազանին հետ, և այդ պատասխանատուութիւնը աւելի ծանր է ու խզճի խնդիր մը իրեն համար՝ քան Շարականի մը երգեցողութեան մասնակցութիւնը ու Աւետարանի ընթերցումը տաճարին մէջ, զոր պէտք եղածն աւելի թիւով կատարող վարդապետներ կան արդէն Վանքին մէջ, որոնց գլխաւոր զբաղումն է այդ՝ Եւմովեան Տեսչին վրայ քննադատութեան տարալիներ տեղացնելու զբաղումէն ետքը:

Այսքան մը՝ Ղեւոնդ վարդապետի անձին համար:

Գալով իր գործերուն, խօսքը կուտանք առ այժմ «Հրաչեայ»ին, սպասելով միշտ որ կեդր. վարչութիւնը իր Ս. Նախագահով խղճամիտ ու անաչառ քննութեամբ մը վերջ տայ «հաշուական խնդիր» կոչուած խրտուիւլակին, որ առաջ կը քշուի միշտ՝ անորոշ, տարտամ գոյներով, պատիպատ առարկութիւններով, առանց մեկին ու յստակ բան մը ըսուելու, քառորդ դարու արդիւնաւոր գործունէութիւն մը և մաքուր համբաւ մը հանրային կարծիքին առջև աղարտելու մտադրութեամբ:

Ուշ կամ կանուխ, ճշմարտութիւնը պիտի յայտնուի այս գործին վրայ. բայց մինչև այն ատեն, Ս. Յակոբեանց Վանքն է որ պիտի տուժէ բարոյապէս ու նիւթապէս: Եւմովեան Տեսչին հակառակորդ խմբակը չի բաւականանար հրատարակել տալով խելքին փշածը, այլ իր բանբերներն ալ ունի որոնք բանբասանքը ու յերիւրանքը կը չահագործեն լայն սահմանի մը մէջ. այնպէս որ, Ղեւոնդ վարդապետը պաշտպանել ուղղներն իսկ կը փորձեն արատաւորել, դիւրմբունելի գրոյցներով: Լրագրական կեանքի մէջ նոր չէ այս երեւոյթը. տկարամիտներ կրնան տեղի տալ այդ գրոյցներուն առջև, ինչ որ է արդէն զանոնք տարածողներուն նպատակը. բայց միշտ պիտի գտնուի անկեղծ հրապարակագրութիւն մը որ իր կարծիքին տէրը պիտի

մնայ մինչև վերջը: Ասոր ապացոյցը տուին ու կուտան արդէն «Երուսաղէմաէր» ու «Հրաչեայ»՝ Բիւզանդիոնի մէջ, «Դիտող»՝ Մանգուսի մէջ, Արամ Անտոնեան ու այս տողերը գրող Աբեւեբի մէջ, ու Մասիօ խմբագրութիւնը:

S. Ա.

Աւստի վեր յիշուած «Հրաչեայ»ի յօդուածին այն մասը որ կը վերաբերի Երուսաղէմի երմսական Տեսչին՝ Բանդիկեզամեայ գործունէութեան որուն գլխաւոր գիծերը երեւան կը բերէ՝ որո՞ւ ու դրական կեցով:

Ղեւոնդ Վ. Մաքսուտեան, որ 30—35 տարիէ հետէ ինքզինքը նուիրած է այս Մեծատաճին, իր արդի ծանր պաշտօնը պտանձնած է հանգուցեալ Նսայի Պատրիարքին օրով, 1878ին դո՞րծի ձեռնարկելով. նախ հաշուակալութեան դիւան կը կազմէ և Աթոռապետական հաշիւներն օրինաւորապէս Տոմարներու մէջ արձանագրելու համար կրկնատոմարի դրութիւնը կը հաստատէ, որ մինչև այդ ատենները գոյութիւն ունեցած չէր Վանքին վրայ ծանրացած սոսկալի սակերով ահագին պարտքը թեթեւցնելու հոգ կը տանի, իր իմաստուն վարչութեամբը Երուսաղէմի թէ՛ կրօնական թէ՛ աշխարհական պատուաւոր և երեւելի անհատներուն հետ ծանօթանալով, սիրալիր յարաբերութիւններ կը մշակէ, ամէնուն վստահութիւնը կը գրաւէ, որով Վանքին վարկը բարձրացնելով քիչ ժամանակի մէջ կը յաջողի 18% վճարուած սարսափելի սակը հետզհետէ 4ի իջեցնել և վերջերս ալ 2ի, որով բաւական մեծ տարբերութիւն մը կը գոյանայ սովորական ելեւմուտքին մէջ յօդուտ Ս. Աթոռոյ:

Վանքին հաշուական ճիւղը կազմակերպելէ ետքը, կը ձեռնարկէ ի նորոյ հասութեան կալուածներ շինելու Երուսաղէմի մէջ և շրջակաները, ի Բեթլէհէմ և ի Յոպպէ, Աթոռապետական գետիններու վրայ: Ամենէն փառաւորն ու սքանչելին, որ իր աշխատութեան զուէս գործոցներէն է՝ Երուսաղէմի մէջ Յոպպէի դռնէն դուրս, հասարակաց պողոտային

վրայ չորս ձանապարհի ճիշտ կեդրոնը կա-
ռուցուած հսկայ օթէլն է, որուն գեղեցիկ
դիրքը առաջին անգամ դիտողին աչքին կը
զարնէ. նմանը թերեւս ի Պոլիս, Բերա գետ-
նուի. կարծեմ թէ չափազանցած չեմ ըլլար,
Քանի որ մեր համայնքին մեծամասնութիւնը,
որ երուսաղէմ այցելած միջոցին, մէկէ աւելի
անգամներ առիթ ունեցած են տեսնելու, և
նոյն իսկ ներքին յարկը պտտած և հիացած
են, կրնան վկայել: Յիշեալ օթէլը երեք յար-
կի վրայ բարձրացած է և վարի յարկը երեք
կողմի վրայ քառասունի չափ մթերանոցներ
չինուած են: Սոյն մթերանոցները, միարան-
ներէն կարող անհատներ ծախքը վճարելով
իրենց հաշուոյն գնած են, տարեկան վորձքը
իրենք կը ստանան, ցորչափ կենդանի են.
յետ մահուան՝ բոլորովին Աթոռին սեպակա-
նութիւնը կը դառնան. այս դրութիւնն ալ
Ղեւոնդ Վրդ. ի դործունէութեան մէկ կերպն
է, որ այս եղանակով միաբաններուն դիզած
հարստութիւնը հիմակուց Աթոռին օգտին կը
ծառայեցնէ, որով մէկ կողմէն զանոնք կալ-
ուածատէր ընելով և հարստացնելով, միւս
կողմէն հարստացուցած և ապահոված կ'ըլ-
լայ Վանքին ապագան: Մթերանոցներու վը-
րայի երկու յարկերը որոնք ըստ օթէլի մաս
կը կազմեն, Աթոռի հաշուոյն են, առանց սա-
կայն սանթիմ մը ծախսուած ըլլալու վանքին
մատուկէն. ելեւմտից տեսուչը դուրսէ դուրս
մասնաւոր փոխառութիւններով կը յաջողի
ձեռնարկած գործն ի գլուխ հանելու, այլոց
նախանձը դրդուելով, իսկ մերայնոց հպար-
տութիւնը շարժելու աստիճան. կարծեմ որ
այդ շինութեան մասնաւոր հաշիւը փակուած
ըլլալով, երկու երեք տարիէ ի վեր հաշա-
րական ոսկիի պատկաւելի հասոյթ մը աւել-
ցած պիտի ըլլայ ընդհանուր կալուածոց եկա-
մուտին վրայ. չէնքը՝ ամբողջութեամբն շու-
նելով, տարեկան 1600 լիրայի դումար մը
կը բերէ:

Քանի մը քայլափոխ վեր, նոյն դժին
վրայ, հասարակաց պարտէզին ճիշտ դիմացը,
«Մեծ արտ» կոչուած գետնին վրայ երեք
տարի առաջ կառուցուած քսանի չափ մեծ և
ընդարձակ մթերանոցները, միեւնոյն դրու-

թեամբ միաբաններուն ծախուած և անոնց
յիշատակին նուիրուած են, որոնց վրայ կրկին
յարկերով կը բարձրանայ երկրորդ օթէլի մը
չէնքը աւելի փառայեղ քան առաջինը, տա-
րեկան 700 լիրայի, որ տասը տարուան համար
վարձու տրուած է. քանի մը տարի ետքը,
սոյն բացառիկ եկամուտն ալ պիտի աւելնայ
Վանքին ելեւմուտքին վրայ: Սոյն երկրորդ
օթէլին պակաս մնացած մասերուն շինութիւնը
եթէ լրանայ, առաջինէն շատ գերազանց և
փառաւոր պիտի ըլլայ, դիրքով ալ բարձր,
ինչ որ յատկադիրն վրայ շէնարած ենք
ժամանակին. այդ համեմատութեամբ եկա-
մուտն ալ աւելի շատ պիտի ըլլայ անշուշտ:
Հիմակուցնէ կը խոստովանի՝ որ այս մեծ և
հոյակերտ շէնքին ամբողջութիւնը կախում
ունի միայն Ղեւոնդ Վ. ի նման ձեռնհաս ե-
լեւմտից անաչի մը աշխատութենէն. միեւնոյն
կարգի վրայ են նաև Ամեն. Տ. Յարութիւն
Ս. Պատրիարք Հօր անձնական ծախիւք ի
նորոյ շինուած տանի չափ մթերանոցները,
վրայի աբարքմանով և սրբատաշ մաքուր
քարերով հոյաչէն մեծ տունը: Ասոնց նման
մեծ ու պղտիկ շատ մը շէնքեր, տուն և մը-
թերանոց, կառուցուած են Մաքսուտեան
Վրդ. ի անխոնջ ջանիւքը, որոնք մէյմէկ յիշա-
տակներ են իր անունը փառաւորելու: Այսպէս
քսանըհինգամեայ պաշտօնավարութեան մի-
ջոցին ի նորոյ կառուցուած շէնքերէն դոյա-
ցած հասոյթը եթէ ի նկատ առնել պէտք ըլ-
լայ, 4000 ոսկիի գումարի մը առջև պիտի
գտնուինք, որուն կէսը գրէթէ միաբաննե-
րուն դրպանը կը մտնէ. իսկ մնացեալն Ա-
թոռին դուտ չահ կը մնայ բացէն:

Չէր արժեր այսպիսի աշխատաւոր պաշ-
տօնեայի մը քսանըհինգամեայ յորելեան կա-
տարել. ընդհակառակը, յարգանքի ամենա-
գոյղն նշոյլն անգամ կը զլացուի և դժգո-
հութեանց ու անվերջ արտունջներու ձայներ
կը բարձրանան: Սիրոյ և համակրանաց ցոյ-
ցերու փոխարէն, ատելութեան և նախանձի
յարձակումներ կ'ըլլան, և այդ քաջ ելծառա-
գէտ վեղարաւորին շուրջ՝ կեցցէներու տեղ,
հայհոյութեանց ու խայտառակութեան դո-
ռում գոչումները միայն կը լսուին:

ԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Աւասիկ այն ֆրանսերէն ոտանաւորը զոր Մասիսի նախորդ թիւով իր հրատարակած հմտալից յօդուածով՝ Տիգրան էֆ. Ելքէնճեան առաջարկած էր Յ. Գուրգէն էֆ.ի՝ «Մեարդական լեզուին վերածել» և որուն հրատարակութիւնը յետաձգած էինք ներկայ թիւին : Յարգելի յօդուածագիրը կը յայտարարէ թէ, ի դիւրութիւն թարգմանութեան, հայ տաղաչափութեան սողերը կրնան երկու վանկ աւելի ունենալ քան ֆրանսերէն բնագիրը . բայց յանգաւորութեան անխախտ պահպանումը և սողերու չլաւելումը բացարձակ պայման են :

RIMES FANTAISISTES



BAINS DE MER

Si tu veux, faisons un rêve ;
N'allons pas, cet été-ci,
Sur une élégante grève,
C'est Paris en raccourci.

Oui, cette grève élégante
C'est encor les boulevards,
Le même monde y fréquente
De snobs et de bolivars.

En t'y prenant dès Décembre,
Pour cinquante francs par jour,
Tu peux avoir une chambre,
Au cinquième, sur la cour.

Tu manges à table d'hôte,
Inquiétantes splendeurs !
D'abord, tu es côte à côte
Avec un tas d'embêteurs.

L'un te dira ses crevettes
Et le mal qu'il s'est fichu
Pour prendre ces sales bêtes,
Et dans quels trous il a chu...

L'autre, avec grand'turbulence
Et gestes de tout le corps,
Estropiera le silence
En bâblant de ses records...

Mais laisse toute espérance
D'assouvir ta faim, surtout.
Vraiment, tu croirais qu'en France
On ne sait manger du tout.

Bref, le logis et la table
Sont à peu près comme ici,
Avec moins de confortable.
C'est navrant, mais c'est ainsi.

★ ★

Il se peut que tu te baignes.
Diable ! alors, pauvre entêté,
Il ne faut pas que tu craignes
L'orde promiscuité.

C'est dans une cinquantaine
De mètres d'eau, Dieu puissant !
Quand la mer n'est pas lointaine,
Que vous devez tenir cent.

Ne crois pas que je veux rire
Ni te monter un bateau.
C'est ici le cas de dire :
Bien plus de poissons que d'eau !

Je suppose qu'en yrai sage
Ce bain ne te tente pas,
Que tu prêtères la plage ?
N'y compte pas faire un pas.

Ici, sont d'inextricables
Réseaux de tennis, croquets,
De filets, arceaux et câbles...
De cabines, de baquets.

Là, c'est la gent haïssable
Des totos et des tatas
Qui vous défoncent le sable.
Ce ne sont que trous, que tas.

Si tu fuis dans la campagne
(C'est triste au bord de la mer)
Que le Seigneur t'accompagne !
Ton sort est bien plus amer.

Ce n'est plus qu'automobiles
Qui t'écrasent, et des pneus
Que des gaillards malhabiles
Manœuvrent comme des pneûds..

Si, d'autre part, tu te rues,
Car, enfin, tu veux marcher,
Dans les trois ou quatre rues
Qui sont autour du clocher.

Tu rencontres des boutiques,
Des bazars et des instars,
Et leurs produits authentiques,
Fabriqués ru'Mouffetard ;

Des souvenirs... Des ivoires...
Coquilles, galet meurtris
Par des prix de Rome, poires
Qui n'ont pas très bien mûri...

N'y résiste pas. Achètes
En, puisque aussi bien, tu es
En train de faire la fête ;
Et qu'il faut ton temps tuer.

★ ★

Tu penses, pauvre pécore,
Que tu vas te rattraper,
Le soir ? Va, c'est pire encore,
Avant comme après soaper.

Le soir, de jeunes vidames,
Vêtus de plumes de paon,
Font la roue autour des dames
Au son d'un zizi-panpan

Que l'inévitable orchestre
De Tziganes grince et moud
Et moudra tout un trimestre,
Bouche en cœur, et regard mou.

Où fuir ce bruit de vaisselle?
Tu n'as que le Casino...
Horreur! une demoiselle
Tape déjà le piano!...

Tu as aussi la ressource
D'aller, comme certains veaux,
Te séparer de ta bourse
Au jeu des petits chevaux...

Ça ne fait pas ton affaire?
Eh bien! ne va pas chercher:
Tu n'as qu'une scène à faire
Vois-tu, c'est de te coucher.

Il se pourrait que tu pusses
— Dernière déception —
Donner à manger aux puces!
N'y fais pas attention.

Mais, au contraire, t'estimes
Heureux si ton hôtelier,
Pour gagner quelques centimes,
Ne te les fait pas payer.

RAOUL PONCHON.

ԽՄԻՆՈՒՄՆԱՆ ՆՕՓԵՐ

Ս. Պատրիարք Հայրը շարաթ իրիկուն Պէօյիւքսէրէ երթալով՝ հիւրընկալուեցաւ Մկրտիչ Էֆ. Էսաբեանի բնակարանը և կիրակի առաւօտ քարոզ խօսեցաւ գիւղին եկեղեցին։ Երկուշաբթի օրի Ն. Սրբազնութիւնը բարիգալուստի այցելութիւն տուաւ գերման դեսպան Պ. Մառշալի։ Այցելեց նաև Վերին Վոսիփոր բնակող ծանօթ ազգայիններու, և երեքշաբթի Պատրիարքարան իջաւ։

Խառն Ժողովը իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ նկատողութեան առնելով Ռուս մանկոյ Հայոց առաջնորդական կազմակերպութեան անհրաժեշտութիւնը, պաշտօն յանձնեց Պրուսայի առաջնորդ Տ. Յովհաննէս եպիսկ. Արշարունիի որ, իր վրայ մնալով հանդերձ այդ առաջնորդութիւնը, առժամաւ պէս Ռուսմանիա երթայ իրլու Պատր. Փոխա-

նորդ և տեղական հանգամանքները ու իրաց վիճակը քննելով, պէտք եղած միջոցները սահմանէ այդ վիճակը կազմակերպելու համար և հովուէ ժողովուրդը։

Ս. Հայրապետը հեռագրաւ խնայուցած է Պատրիարքարան, թէ անցեալ կիրակի Ս. Միլոոնի օրհնութիւն կատարեր է շատ վառաւոր ու հանդիսաւոր կերպով, ի ներկայութեան 14 եպիսկոպոսներու որոնց մեծ մասը թեմական առաջնորդներ։ Բազմաթիւ ուխտաւորներ ներկայ գտնուելու են այս հոգեւոր հանդէսին, որ թէև յառաջիկայ վարագայ խաչի տօնին պիտի կատարուէր՝ բայց եպիսկոպոսներու ներկայութենէն օգտուելով աւելի կանուխ կատարելու են։

Ռուսահայոց շատ մը եկեղեցիներուն մէջ, Թիֆլիզի վանքի մայր եկեղեցիէն սկսելով, հոգեհանգստեան արարողութիւններ կատարուելու են հանգուցեալ Մելքիսեդեկ Սրբազանի յիշատակին։ Անցեալ կիրակի օր ալ, Գատուգիւղի և Պէյքօղի եկեղեցիներուն մէջ հոգեհանգիստ կատարուեցաւ՝ մահուան քառասունքին առթիւ։

Ռոսոսոյի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկ. Ասլանեան ի մօտոյ մայրաքաղաքս պիտի գայ՝ անձնական տկարութիւնը դարմանելու համար։

Գասթգիւղի Թաղ. Խորհուրդը գնել է Արամեան վարժարանին կից գտնուած 500 կանգունէ աւելի դեպիքը, միացնելու համար վարժարանին։

Ազգ. Հիւանդանոցի ներքին պաշտօնեաները մեծամասնութեամբ ապահովագրեր են իրենց կեանքը Հօնկրուազ ապահովագրական ընկերութեան։ Ուսուցիչներէն ետքը՝ Հիւանդանոցի պաշտօնէութիւնը կուտայ օրինակը ապահովագրական գրութիւնն ընդունելու՝ իրրե կանխադրութիւն ապագայի և ընտանիքի։

Վերելք. — Պաշտօնակից մը իր «Կովկասեան Լուրեր»ու բաժնին մէջ կը ծանուցանէ թէ ուսանողներու խումբ մը, որ կը բաղկանար 40 հոգիէ, օգոստ. 14ին Ա. Բ. Եւանգելականցի առաջնորդութեամբ Թիֆլիզէն ճամբայ ելել է Մասիս լեռան գագաթը բարձրանալու համար։ Այս գիտական արշաւանքին պետն է Թիֆլիզի օգերեւութաբանական կայանին պետ Պ. Դլանիկ։

Լէսն Ժ. Գ. Պապին վերջին տաղին թարգմանութեան մէջ, զոր հրատարակած էինք նա-
խորդ թիւով, տպագրական վրիպակներ սպրդած ըլլալով՝ որոնք կրնային իմաստի խանգա-
րում պատճառել և այդ քերթուածին ներդաշնակութիւնը խանգարել, հարկ կը համարինք
անդամ մը եւս հրատարակել զայն, թարգմանչին խնամատ սրբագրութեամբը:

ՅԱՅԳԱԽՈՂԷ ԼԱՌԱԶՈՂ ԼՈԳԻՈՅՆ

Մօտալուս նեպէ օրհաւ, Լեւո՛ն. արդ ժամ է մեկնելոյ
եւ ունել ըստ արժանեաց բզնանապարհն յաւերժական:
Ո՛ր վիճակ պահիցի քեզ. յորդորեին յուսալ յերկինս
Պարգեւ բնծայեալ յառասաբաւս քեզ յԱսուծոյն:
Այլ փականքն գերագոյն, ծանրակրօն պատճօնքն մեծ,
Յայնքն ամս վարեալ ի քեզ—խորհեա՛ց ի սոյնս հեծեծագին:
Զի որ յազգաց անդ միջի բազմեալ յաթոռ գերագահ,
Վա՛յ եղկելոյն. խտագո՛յնս բզկեճ յուծցէ զիւր յանցանաց:
Յարհաւիրս այսոսիկ. պատկեր քաղցրիկ ինձ յանդիման
Երեւեալ, եւ քաղցրագոյն ծայն բարբառոյ հնչէ յոգիս.
Զի՞ քեզ այսքան ան եւ դողումն. հի՛մ գանցելոյ ժամանակին
Յեղեղեալ շարս ի մքի. յուզիս սրիւ ծանրաբախիծ:
Ահա՛ Բիբսոս բազմագուր, լե՛ր աներկմիս, զի խոնարհիդ՝
Որ հայցես բզրոյութիւն, բզբնաւ յանցանքդ քաւեցէ:
Թարգմ. ՏԻԼԷԹԱՆԹ

ԱՆԶՐԵԻՈՏ ՎԵՐՋԱԼՈՅՍ

Վերաս ձանձրոյթը կ'իջնէ ինչպէս մթնու մը աւան
Զոր վայրկեանէ առ վայրկեան կը բանձրացնէ իրիկուցն՝
Տալսուկ մը որ կ'ընթանայ խորհրդաւոր ու լրկուցն.
Միօրինակ, խաւարչին գիշերով մը անտանձան:
Սակայն ո՛չ մէկ հոյակապ սեռէ ես չե՛մ վիրաւոր,
Եւ սրլացած ժամերը աւաղելով չե՛ք բնաւ որ
Կը նըւարեմ ես՝ տարամ ձեւերու պէս հեռաւոր՝
Պարեգին մէջ անցեալին՝ շրջուն յուրեքս—ամեն օր:
Քայց այս պահուս նըւաղուն սոսկումին մէջ անձրեւոտ
Իրիկուան մ'եւ մութին մէջ դանդաղ՝ կըզգամ ես իմ սիր
Զոր ո՛չ մէկ սեռ չէ լքած—մեյամադձիկ, անժրպի՛ս,
Ինչպէս կընոջ բացակայ Տըրսմասեսի խուցն աղօս:
Թարգմ. Մ. Ո.

ԷՅԲԱՆԻՄ ՄԻԲՍԷԼ(*)

(*) Յրանապի վաղամուսիկ բանաստեղծ. (1866—1890): Ռեմի տը Կուռման, ֆրանսա-
կան արդի խորհրդապաշտ դպրոցին պէտքը, Դիմակներու Բ. Գրքին մէջ հետեւեալ կերպով
կը գնահատէ զինքը. «Քանի որ ան համառօտ էջեր միայն թողուց մեղի, քանի մը տարի-
ներու զօրծը միայն, քանի որ ան մեռաւ ա՛յն տարիքին մէջ ուր գեղեցիկ հանձարէ ա-
ւելի բան մը կը քնանար դեռ, բո՛յր անծանօթ՝ ծաղկի փակ բաժակին մէջ, Միքաէլ հարկ
չէ որ դատուի այլ սիրուի միայն: Հրապուրիչ էր, թէն շատ սէգ. սիրուն, թէն արտում
ու կքուն. անո՛ւն՝ թէն աստապեղաւ կամ կեանքէն և կամ տաղտկացողներէ ու նա-
խանձոսներէ, որովհետեւ կանխահաւ փառք մը ունեցաւ ան՝ իր տաղանդին պէս:» Իր
գործերն են. L'Automne, La Fiancée de Corinthe, Le cor Fleuri, Oeuvres, Briséis:

ԱՆԲՍՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻՆ

Ժորժ Սանի և Ալֆրէտ ար Միւսէի կեանքերէն ուրուագիծ մը փորձելու ատեննիդ Մասիսով՝ այնքան բնականօրէն կը հարկադրուիք խօսքը ընել անբարոյական գրականութեան մը, որ մշակուած է բարոյիկ գրագէտներու կողմէն, ու յետոյ բարոյական գրականութեան մը զոր փորձած են ընել անբարոյական գրագէտներ:

Խորունկ հետաքրքրութիւն մը կ'առնէ իսայս պահուն գիտնալու համար որ իրա՞ւարդեօք ամբողջ քաղաքակրթուած ազգերու գրականութեան մէջ իրականապէս գտնուած են մաքուր ու վսեմ հակումներ ցուցնող գրագէտներ որոնք սա կամ նա պատճառով փորձած ըլլան աղտոտ ու աղբանոցի գրականութիւն մը որ սակայն խորունկէն նպատակուած ըլլայ ժողովրդական վատթարացումները ձաղկելու: Ու դեռ անբարոյիկ գրագէտներ ալ գտնուէին որոնք մինչեւ վերջը իրենց անձնական չափի տեսակէտերով ստիպուած ըլլային անվնաս գրականութիւն մը ընելու:

Եթէ երբեք կայ գրականութիւն մը քաղաքակրթուած ազգերու մէջ մշակուող, բոլորովին առոյգ ու դալար, ժողովուրդներու ընդհանուր ազնուացումին ու կրթութեան հետ հաշտ ընթացող, ու եթէ երբեք կայ առողջ գրականութիւն մը իր որ և է ճիւղերուն մէջ ընդհանուր օգտակարութեան հաստատ մտադրականութիւ՞ով, բնականաբար բոլոր ասոնց հանդէպ եղած չեղումները խալ ու անօգուտ կը կոչենք, բացարձակապէս դուրս հանելով գեղարուեստը ու գեղեցկագիտական գրականութիւնը:

Տիւմա Որդին Դամիխազարդ Տիկիճը կարդալու ատեն չկրցի զսփլ հիացումս հասարակաց աղիճի մը՝ Մարկրիթ Կօթիէի հանդէպ՝ ու մարդ չկրնար չցաւիլ Pilgrims Progressի հեղինակին John Bunyanի վրայ որ սակայն ամենէն հասարակ ու ցած ծնունդ մը կը ցուցադրէր ասաներկու քարիներու իր

արգելափակման միջոցին: Եւ սակայն, Pilgrims Progressը Անգլիայի ու Ամերիկայի մէջ ամենէն շատ կարդացուած գիրքն է: Ու դեռ բոլոր ասոնց, ու ժորժ Սանի հետ շատ մը ուրիշներ, երկու ուղղութիւնով ալ գրական հրատարակութիւններու գէղերով կը կը ներկայանան աշխարհի, որոնցմէ ոմանք իրենց անբարոյական միջուկէն դուրս գեղարուեստական ոճի ընտիր հանգերձանքով մը մուտ կը գտնեն մարդերու մէջ, ու ըլլան տրամաբանողներ ալ որոնք հեղինակի մը կամ գրագէտի մը ընել փորձած գրականութեան օգտակարութիւնը միայն նկատի կը սիրեն առնել ու գնահատել, եւ ոչ թէ անոր անձին ու բարոյականին իսկական հանգամանքը: Ահա՛ Օսքար Ուայլտ՝ որ սիրուն բանաստեղծ-գրագէտ մը ինքը՝ Բարիդի էն աղտոտ մէկ պանդոկին մէջ կը փչէր հոգին...

Ու դեռ պարսաւանքի բաժի՞նը, ահա ամենէն դժուարը ու շփոթեցնողը, որովհետեւ անբարոյական գրագէտի մը կամ գրականութեան մը պարզ որակումին ատենը տակաւին տրամաբանելու կերպերը կը տարբերին, կը տարբերին ճաշակը ու մտքի լայնութիւնը: Ու այն ատեն մեր մէջ ալ խելոտներ չպիտի գտնէինք՝ Էմիլ Զոլայէն մինչեւ... Իդմիրի քրոնիկագիրը Քրիզանթէմ փորձել ուղուած գրականութեան մը հանդէպ անբարոյականի ու բացարձակ վնասակարի խօսքեր ընողներ—ես պիտի ըսէի իրական մեղապարտները ասոնք, որոնք տակաւին ո՛չ կրնան հասկնալ վէպի մը իրական արժէքը ու ո՛չ ալ ֆանթազիի մը թեթեւ ու անվնաս ոգին:

Ես չպիտի պնդեմ որ ունեցած ալ ըլլանք գրականութիւն մը լեցուն հանդամանքներով երեւան բերուած, հետեւապէս չարմեր իսկ նկատել տալ որ Մառի Յովհաննէսեանի դիտողութիւնները չեն վերաբերիր մեր գրականութեան: Ո՛չ անբարոյական գրականութիւն ունինք մենք ու ո՛չ ալ անբարոյական գրագէտ մը որ բարոյականութեան դասեր տայ: Ասոնցմէ զատ, ամէն բան ունինք մենք բոլոր զաւղակութիւններու հետ մէկտեղ: Մերը ընդհանրապէս անօգուտ գրականութիւն է:

Ու դալով դարձեալ ընդհանուր աղբերու գրականութեան, ու նկատելով զարգացումի տարբեր մակարդակները՝ տարբեր աղբերու, համեստօրէն կ'ուզենք վեր առնել որ անբարոյական գրագէտ մը բարոյականութիւն մը չափելով միայն կը կարծենք իր անձին պատասխանատուութեան բաժին մ'ունի, իսկ բարոյականի տէր գրագէտ մը սա կամ նա պատճառով եթէ բացարձակ անբարոյականութիւն կը մշակէ, ընդհանրութեան հանդէպ պատասխանատուութեան բաժին մը ունի միայն, հետեւեալէս պարտաւելի:

Արդէն, ամէն պարագայի մէջ ալ պատասխանատուութեան բաժինները ճշդելէ վերջն է որ մարդիկ իրենց վճիռները կրնան սահմանել:

Ո՞վ պիտի ճշդէ ատիկա սակայն. մարդիկ որ անբարոյական գրականութիւն կը մշակեն թէ մարդիկ որ անբարոյական են ու բարոյական գրականութիւն կը մշակեն. կամ թէ ընթերցող հասարակութիւնը որ իր զարգացումին պառնայ ու անվճար կը նկատէ:

Խնդիրն այն է որ տակաւին Հայերս այդ սահմաններուն վրայ չենք գտնուիր, քանի որ տգիտութեան ու կրօնի անունով ամենէն անկեղծ սրակումները բականութեան մէջ, անբարոյականութիւն ու հայհոյութիւն անուանելու չափ յետադէմ ենք:

Եւ յետոյ, Մառի Յովհաննէսեան պիտի կրնամք ինձի ըսել թէ ի՞նչ եղած են աղբարկները անբարոյական կոչուած գրականութեան, և թէ պէ՞տք է տեղ մը սահմանել ասոր ալ անպաճառ ընդհանուր գրականութեան մէջ, ու թէ իրա՞ն է որ գրականութիւնը երբեք պատշաճեցուցուած է անբարոյական որ և է գիրքի, բառին լման նշանակութիւնովը:

ՆՈՍՐՈՎ ԳԵՇԵՆՍԵ

ՄԱՆՉԵՍՏԵՐԻ Համալսարանը որոշած ըլլալով առեւտրական Ֆաբիլթէ մը հաստատել, դիմում ըրեր է քաղերն բնակիչներուն որ 10 տարուան համար տարեկան 1500 ոսկի նուիրատուութեամբ աջակցին այդ հիմնարկութեան: Տեղւոյն հայ վաճառականները նկատելով այն առեւտրական դիւրութիւն

ները զորս կը վայելէին Մանչեսթերի մէջ, որոշեր են իրենց կողմէ տարեկան 100 ոսկի յատկացնել այդ վաճառականական վարժարանի հիմնարկութեան ի նպաստ:

ՅՈՉ-ՄՈՉ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԳԱՅԾԱԿՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնտոնի ամուսնալուծմանց դատարանը, ասկէ գրեթէ ամիս մը առաջ, Քոնսդանդինիտի—Լէնչ դայթակղութեան առթիւ, խել մը նկատելով ներով լեցուն վճիռ մը արձակած է, որուն վերջին հատուածը՝ պարզապէս մարդու բերնին ջուրերը վաղցնել կուտայ, երբ ամուսնացած ալ է մանաւանդ:

Տեսէ՛ք.

«Տիկին Ժիւլիէթ Քոնսդանդինիտի և Տօքթ. Լէնչ շնացած ըլլալնուն յանցաւոր են. ուստի դատարանս կը դատապարտէ զՏօքթ. Լէնչ՝ 625 հալար փրանք վճարուց հատուցում վճարելու պարոն Քոնսդանդինիտի»:

Վեց հարիւր քոանը հինգ հալար փրանք, oh! voila une vraie chance de... cocu, ինչպէս կ'ըսէ բարիզեան առածը:

Երբեմն՝ խաբուած ամուսիններու եղջիւրաւոր եղբայրակցութիւնը մեր գուլթը կը շարժէր, մեղքնայիք արարածներ էին անոնք: —Նալինք մարդը խապար ունի, կը մտածէինք մենք մեզի:

Հիմա, Լոնտոնի երգուեսներու վճիռէն անմիջապէս ետքը, Քոնսդանդինիտիները մեր նախաձը կը շարժեն և մենք՝ կարծրացեալ ամուրիներս՝ կ'ափսոսանք թէ ինչու ժամանակին չենք կարգուած: մենք ալ մեր կարգին ունենալու համար Տիկին Ժիւլիէթի tremper և temperamentը աւելցող կիներ որոնք մեր կեանքին ընկերը, սրտին հատորը և բարձակից բարեկամները ըլլալէն ետք՝ կը զիջանին ըլլալ նաեւ շահաբեր կիներ, des femmes de rapport.

Լոնտոնի մէջ, օրինակի համար, հաստատելի խեղացութիւն է ուրեմն այլամերձ կին մը ունենալ քան Old Bond Streetի վրայ չորս հաստ արարքման:

Առաջ՝ ամուսնանալ մտադրածնուն պէս, պարկեշտ, առաքինի, պատուաւոր աղջիկներ կը փնտռէին Լոնտոնցիները. ասկէ ետքը, աւելի գործնական պիտի սեպեն փնտռել աղջիկներ, որոնք պակաս անգիտելի զիրենք չորս հատ առնի տէր կ'ընեն... Old Bond Streetի վրայ:

Ամուսնութեան style moderneն է այս: Տիկին ժիւլիէթի պէս կին մը ունենալը, երկաթուղիի վիճակահանութեան մեծ պարգեւը չհօղ թիւը պահանջելու պէս բան մըն է, շահագար ֆրանք ալ աւելի:

Մանաւանդ ֆրանսական թերթերու չորրորդ երեսին մէջ, շատ անգամ կը հանդիպիմ սա անսակ ծանուցումներու.

«Կուղէ՞ք տարին վեց հազար ֆրանք rente մը չինել: Չորս ղոյգ ճագար խնամեցէք և տարւոյն վերջը այդ գումարը կրնաք չահլ ապահովագէտ»:

Ուրիշ մը.

«Articles de boderoché!

«Manière de se faire cinq mille francs de rente.—Discretion!»

Առասպել, խեղկատակութիւն այս ամէնը, սո՛ւա: Ո՛վ կ'երաշխաւորէ թէ այս ցուցուած ճամբաները դէպի բաղդէ կ'առաջնորդեն մարդը: Մինչդեռ անդին Լոնտոնի երգուեալներուն վճռագիրը կայ շօշափելի, հաստատ, անբեկանելի:

Պ. Բոնսգանդինիտի իբրեւ բաղդաւոր մարդ, իրաւ բաղդաւոր է: Առանց աշխատելու, առանց քրտնելու, առանց որ և է յուզմունքի, նոյնիսկ առանց բեճճի մը վըտալքելու, միայն իր կնոջը ոչ թէ jouissance՝ այլ անոր usufruitն վարձու տալով, յանկարծ երեսուն հազար սթէրլինի հարստութեան մը գլուխը կը գտնէ ինքզինքը: Մարդս կարգուելէն ետքը ասանկ կարգուի:

Մէկ ատեն էր որ cocu ըլլալը ամօթ էր: Հիմայ, Բարիդեան ու Լոնտոնեան ընկերութեանց մէջ, դեղեցիկ կին ունեցողներու վարկը աւելի բարձր է քան դեղեցիկ réputation մը ունեցողներունը:

Եղջիւրները մարդուս աչքը չեն հաներ հիմայ ընդհակառակը եղջիւրաւորներն են որ մարդուս աչքը կը մանեն,—միշտ եւրոպական բարքերուն վրայ խօսելով:

Ժամանակները այսպէս կը պահանջեն, համակերպելու է, ճար չի կայ:

Prix de vertuէն ետքը le prix de cocu: Նորոյթը Լոնտոնէն կուգայ:

Եթէ այս ամէն խնդ ու խելառ ըսածներէս բարոյական մը կարելի է հանել, ան ալ սա է թէ այսուհետեւ ամուսնանալու համար տգեղ աղջիկները դրամօթիտով առնելու է, իսկ գեղեցիկները մէկ չապիկով: Այդ պաթիթի կտորը վրանուն նետելուն պէս, ուղածիդ չափ գրամ քեղի, խնդիրը Տօքթօր Լէնչ մը գտնելուն վրայ է, որ բարեկամի մը գլխուն եղջիւրահիւս պսակ մը դնելու հաճոյքին համար, վեց հարիւր հազար ֆրանքը աչք առնէ:

Լոնտոնեան այս համով դայթակղութիւնը իր վերջաբանը կ'ունենայ Էքս-լէ-Պէնի մէջ, ուրկէ վերադարձող բարեկամ մը, կը վըտացնէր զիս, տեսած ըլլալ Պ. Բոնսգանդինիտի մէկ նոր չինել տուած villan, որ հետեւեալ անունով կնքուած է եղեր:—Villa des cornes:

Մարդը նկարագիր ունի եղեր: Փոխանակ ֆանթէզիսթ անուն մը տալու իր վիլային, զոր օրինակ Villa Preciosa, Villa des Roses, կամ Villa Juliette, տուեր է անոր անուն մը որուն դէմ ոչ ոք կրնայ բողոքել:

Եւ ըսել թէ ատանկ բարի, պարկեշտ մարդու մը, mon petit cochon փաղաքուշ անունը կուտայ եղեր Տիկին ժիւլիէթ ամէն անգամ որ Տօք. Լէնչէն աւելցած պալիկներով սիրտը առնել կը փորձէր իր տարաբաղդ ամուսնոյն:

Ի՜նչ կատակերդութիւն սա ամուսնութիւն ըսուած բանը, ճի:

ԳՐԻԶԱՆԹԻՄ

ԴԱՆԻԷԺԻ մէջ Գործ անուն հայերէն չաթաթաթերթի մը հրատարակութեան ձեռնարկեր է տեղւոյն առաջնորդ Տ. Եղլէ Մ. Վրդ. Մուրատեան: Գործը պիտի պարունակէ լուրեր և տեսութիւններ Պարսկահայոց կըթական և եկեղեցական գործերուն ինչպէս նաև Հայրապետական կարգադրութիւններուն վրայ: Այս շաթաթաթերթը չիղբաղիր քաղաքական լուրերով:

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՄԵՐ ԵՒ ՕՏԱՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Պ.

Այնպէս է առաջ բանաստեղծութեան երկրորդ բաժանումին, ինչ որ ներշնչումի բանաստեղծութիւն կոչեցինք, պահ մը նկատի առնենք արուեստի արտադրութիւնները:

Կ'ընդունինք թէ «բանաստեղծութիւնը գիտութիւն մըն է ու բանաստեղծը՝ աւելի ճշմարիտ տրամաբանող մը»: Եւ իբր այդ մեծ բանաստեղծներուն տեղ տալու չենք ականաւոր գիտուններու քով: Չեմ կարծեր որ ա'լ գանուին խորհողներ թէ բանաստեղծութիւն ու գիտութիւն իրարու հակառակ են, քանի որ կան գիտական միտքեր որ չեն ախորժիր բանաստեղծութիւնէ ու փոխարձաբար. բայց ասիկա այնքան ճիշդ է ինչքան բանաւոր էր սա դատումը թէ քանի որ քրիստոնէական կրօնքին հետեւողները ամէնքն ալ չեն եղած օրինակելի մարդեր, քրիստոնէութիւնը չէր սէրի կրօնք մը՝ մարդուն բնութեան պահանջները կատարելապէս գոհացնող, և կրօնք ու գիտութիւն երկու հակառակ ծայրեր են. երկու զուգահեռական զիծեր որոնք ինչքան ալ երկարէին՝ միեւնոյն մակերեսին վրայ չպիտի միանային: Հիմա իրողութիւն մըն է արեւի պէս պայծառ, թէ որքան գիտական միտքեր ճաշակ մը առած են կրօնքի զովացընող, սփոփող սէրի օրէնքէն, որքան անոնք դատած են կրօնքը իր էութենէն, հիմնական սկզբունքներէն և չէ թէ թերի հետեւողներէն, փարած են կրօնքին ա'լ աւելի ուժով և դարձեալ՝ ինչքան դիտած են բնութիւնը, հիմնալի ա'ն տեսարանները, ազդուած են լուրի, համ առած են բանաստեղծութիւններէն, այնքան բարձր, որոշ հանգամանք մը տուած են իրենց գիտական խուզարկութեանց արդիւնքներուն, այնքան խաղաղ սիրտ մը ունեցած են ու ըմբռնած լեցուն, հասուն ու իրական վայելք, ինչ որ ռամիկը, տգէտը չպիտի կրնար վայելել: Նոյն ատեն դիտուած է որ գիտութիւն ու քաղաքակրթութիւն որ-

չափ տարածուին մարդկութեան մէջ, այնչափ բանաստեղծութիւնները կը պակսին, թէ՛ բանաստեղծութիւնը թէ՛ ամէնէն աւելի գոյութիւն ունեցած ու սկսած է ժողովուրդներու նախաքայլին մէջ՝ քաղաքակրթութեան չաւիղում, բայց տակաւին հանճարի է'ն դարմանալի ու շքեղ ապացոյցը մեծ ոտանաւոր մըն է՝ արտադրուած քաղաքակրթ դարու մը միջոցին: Առաջին ակնարկով իրարու հակասական կը թուին աս դատումները. քիչ մը ուշադիր մտածում, ներքնայայեցողութիւն պիտի բաւէր համոզելու ընթերցողը թէ միութեան շղթայի մը իրարու մէջ անցուած օղակներուն յաջորդականութիւնը կը տեսնուի անոնց մէջ:

Բանաստեղծ ըլլալու համար ըսինք թէ հարկ է գիտել գիտնալ, նայիլ շուրջնակի, նշմարել իրերը, նկատի առնել զանոնք իբր ամբողջութիւն ու քննել չնչին մանրամասնութիւններն ալ: Խորհուրդի ու գործունէութեան ասանկ բրօսեսի մը մէջ, բանաստեղծը մարդկութեան կը յայտնէ անծանօթ, մահկանացու աչքերուն չի տեսած բաները ու ինքն ալ իր կարգին կ'ըմբռնէ այնքան վայելք, ընթերցողին կը հայթայթէ այնքան մտաւորական հաճոյք ինչքան Նսայի մը, Նիթլըն մը, Միքէլ-Անճէլօ մը, Ռամպլան մը կամ Պէթովլըն մը: Դժբաղդութիւնը հոն է որ սիրուն, պատկերալից բանաստեղծական քանի մը գոհարիկներ ալ եթէ ունինք, — ծաղիկի, լուսինի, արեւի, արշալոյսի, տերեւաթափի վրայ՝ ամէնէն աւելի կը դառնան անցնելու, մեռնելու մօտ անոնց վիճակին շուրջը: Լուսին ու արեւ, արդէն հեթանոս բանաստեղծներ չա'տ յաճախ տաղաչափած են անոնց վրայ, կը մնայ նոր բաներ գրել, տեսնել ամէն աչքի չի զարնող դեղեցկութիւնները, չնչին առարկաները որ կրնան դերազանցապէս հիմնալի յատկութիւններու շքնաղ աչխար՝ մը ամփոփել պուէտի մը ակնարկին մէջ: Ու ետքը՝ դարձնել աչքը մարդուն, — անոր՝ կեանքի այլադան փուլերուն մէջ կրած հոգեբանական վիճակին:

Դիտելու ու քննելու այս հանգամանքներու օժտուած բանաստեղծի մը համար, դեռ

կը մնայ սլայման մը, — արուեստագէտ մը ըլլալու պայմանը զոր լրացնելու է: «Մինչ երեւակայութիւնը մարմին կուտայ անձանօթ իրերուն, բանաստեղծին գրիչը ձեւ կուտայ անոնց ու կուտայ անուն մը և տեղական բնակութիւն մը» (Shakespeare): — Ա. Գ. Ընկելու համար բանաստեղծը կը ստիպուի դիմել յանգին, չափին, ձեւին, արուեստին մէկ խօսքով, ինչպէս ըրած են հին Յոյները հետեւելով «չափ ամէն բանի մէջ» բանաձեւին: Հոս է որ միտքը կը տրամաբանէ:

Հիւսիս կ'ըսէ: — «Փառափար մը ոտանաւորի մէջ թափուած՝ իսկոյն կը դառնայ աւելի հատու և աւելի փայլուն, երկաթը պողպատի կը փոխարկուի: Կարելի չէ միտք բերել ու և գեղեցիկ ոտանաւոր առանց նախ չափն ու յանգը յիշելու:»

Խնդիր մըն է դեռ գրականութեան վարպետներու միտքերուն մէջ թէ ոտանաւոր մը սոսկ արուեստի՞ գործ մը ըլլալու է թէ բարոյականի ուսուցում ալ պարունակելու է:

Edmund Goss, Քէմպրիձի համալսարանին մէջ գրականութեան լեհիւրը, կ'ըմբռնէ թէ ոտանաւոր մը պէտք է դատուի իբր արուեստի ամբողջութիւն և չէ՞ թէ իբրեւ բարոյականի ուսուցում: Matthew Arnold կը պահանջէ որ թարմ խորհուրդ ալ դանուի, որպէս զի տեւական ըլլայ բանաստեղծական երկ մը:

Արուեստի սիրուն գործող բանաստեղծներէն ոմանք շատ հեղ ձեռնածուներ եղած են: Անոնք զրօսանքի համար տաղաչափած ու հաճոյքի հետապնդող ամբոխին քշած են: Սալօնի բանաստեղծներ որոնք երեկոյթի մը կեանքը ունին և ոչ աւելի, եթէ չունին ներշնչում:

Dryden բանաստեղծը չի փնտռեր բարոյական ուսուցում. «Ասիկա եթէ ուղեն կըրնան հանել, երկրորդական է, բայց հաճոյք պատճառելու յատկանիշը անհրաժեշտ է ոտանաւորի մը»: Յայտնի է սակայն, թէ աս' քիչ մը չա'տ թերի դատում մըն է և իրա'ւ ալ Drydenի համար կ'ըսուի թէ ուշադրութիւն զրաւելու, հաճոյք պատճառելու համար իր գրգռեալներուն վրայ ոսկեճամուկ պատմու-

ճան ձգող մըն էր. այնքան քիչ արժէքաւոր գործերու պերճախօս, գեղեցիկ յառաջաբաններ կը գրէր:

Աղեքս. Փանոսեան, նշանաւոր արուեստագէտը, — երկուքն ալ ունի, — երբեմն մէկը, երբեմն միւսը. ո'չ, չպիտի ուղէի այսպէս ըսել, այլ յաւէտ պիտի ուղէի հաւատալ թէ լո'կ արուեստագէտ մըն է. ու արուեստի բոլոր չքնաղ ոտանաւորներէն աննուղական բարոյականի քարոզ մը կը բղխի, այնպէս չէ:

Կան շատ ու շատ մեծ գրողներ որոնք իրենց գործին պատրաստութեան ատեն քիչ անգամ, — եթէ ոչ երբեք, — կը խորհին ժողովուրդի բարոյականին, կրօնական դադափարներուն ազդել, սակայն արուեստին ազդեցութիւնը միտքին, օգտակար կ'ըլլայ բարոյականի մշակումին ալ:

Փանոսեան բացատրութիւն ունի, սիրուն, գեղեցիկ պատկերներ՝ ինչպէս Կաղանդի երգին մէջ:

Քարուհին հայրերը երբեք չեն խօսած սուրբի մը կեանքին վրայ, գործերուն վրայ՝ առանց անոր հագուստին կտորը, մէկ նուիրական նշխարը ժողովուրդին ցցունելու: Կ'առաջադրեմ ուրեմն անոնց օրինակին հետեւիլ նմոյշներ մը տալով սիրուած մեր բանաստեղծներէն:

ՈՒՂԻՆԵՐՈՒՆ ՔՈՎ

Լայն ուղիներուն ֆովն, եգեբն ի վեր, Խոսիմ մեջ ծաղիկ հեգիկ, աղուորիկ, Ինչ հոգիներ կան, աճոյ՞, աճոյ՞, Մեկ կողմ մնացած, հեգ, միմաւորիկ, Լայն ուղիներուն ֆովն եգեբն ի վեր...

ԿԱՂԱՆԴԻ ԵՐԳ

Սիբս աճառ վայելն ու հեցանքն ունի Զմբան ձիւնին մեջ՝ դալարուն գարնան:

ԵՐՈՒԱՆԴ ՄԵՍԻԱՆ

ԱՅՅԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՁՈՒՀԻ

Ուսումն. Խորհուրդէն վկայեալ Օրիորդ մը տրամադրելի ժամեր ունի իբրեւ այցելու ուսուցչուհի հայերէնի և ֆրանսերէնի դասեր տալու՝ աղջկանց վարժարաններու և տուներու մէջ: Պէտք ունեցողները կրնան դիմել կամ գրել Մասիսի խմբագրութեան:

ԾՆԶ ՈՐ ԿԵՂԶԱՅ ՈԳԵՒԱՐԸ(*)

ԴԱՐՁԵԱԼ ԵՂԲՕՐՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—Տղա՛ս, մութ է. ցայգանուշներն են բայուեր:
Վերջալոյսը այտերուդ մէջ կը պաղի.
Կը թարթափին ծիրանիին սառ թեւեր...
Վառե՛մ կանթեղն որով հոգիդ ծիծաղի:

—Ա՛հ, չէ՛, մայրի՛կ, կանթեղին լոյսն է վտիտ.
Կրնաս վառել զայն ուրիշ տեղ մը նորէն:
Հոս աչք մը կայ որ կը հսկէ անքթիթ,
Լոյս աշխարհ մ'որ կ'ողողէ զիս յամբօրէն...:

—Տղա՛ս, արդէն հալեցան սա նոճիներ.
Աղօթասացն հուսկ երգն իր լա՛յն, ա՛լ հնչեց,
Եւ մութն արդէն մեր հագուստին է կպչեր.
Կ'ուզե՛ս վառեմ բազմաշտանակ մ'ա՛յնքան մե՛ծ:

—Ա՛հ, չէ՛, մայրի՛կ, բազմաշտանակն ի՛նչ է որ,
Որքան թշուառ ինձ կը թուին իր բոցեր.
Կուրծքիս վրայ թառի արեւ մ'ա՛հաւոր
Որով կ'այրի իմ էութեանըս եթեր...:

—Կ'ուզե՛ս վառեմ ձեղնաջահ մը, ճօխ այնքան,
Որուն քարեր կը խայտան եօթ գոյներով.
Եօթ գոյները թրջն հոգւոյդ ուրուական,
Բարեխառնեն խորհուրդն որ տայ քեզ խռով...:

—Ա՛հ, չէ՛, մայրի՛կ, կայծոռիկ մ'է ձեղնաջահ,
Խեղճ ուլունք մը զոր կապէիր մերթ վզիս.
Թուի ինձ թէ ձեր ջաներն են հէգ, անճահ.
Եօթ գոյնէն վեր կա՛յ գոյն մը որ կ'ըմպէ՛ զիս...:

Լւեց մայրն, ու շարունակեց, մութին մէջ,
Հովահարով փչել արեւն ադ աղուն,
Ինչ որ հոգի կոչէր չրթունքն իր անվերջ.
Հովահարին լսուէր խուլ հեւքը նուաղուն...:

Իր ամէն մէկ դաշնակաւոր ծանր հեւքին,
Կարծես լոյսէ նո՛ւրբ ալիքներ, նո՛յն չափով,
Այդ հոգիի աշխարհին մէջ կ'օրրէին՝
Աւելի՛ լոյն միջոցի մը խուճապով...:

Հովահարին հետ յոգնեցան այդ ալիք.
Ա՛հ, դեռ չառած կուրծքին վրայ ան դադար,
Գրաւեցին հորիզոնը խաղաղիկ
Ուրկէ լուսինն արցունքին մէջ մօր՝ խնդա՛ր...:

Ուրկէ լուսինն, ութերորդ գոյն մ'անորակ,
Զոր շփոթուն կ'երգէր աղան ոգեւար,
Յամբ, աշխարհէ մը դաղա՛ ծորէր նրբերակ,
Երկնային կաթ, սահելով մօր սիրան ի վար...:

ԵՂՈՒՄԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

(*) Այս ոտանաւորը ներշնչուած է ինձ վաղամեռ եղբօրս այն վերջին կամքէն որուն համեմատ, իր ոգեւարի պահուն, կարգիւէր ինձ և մօրս՝ կանթեղ վառելու իր նշանակը, հակառակ իրիկնամուտին մթութեան:
Ե. Գ.

ՆԱՅՈՒԱԾՔԸ

(ՆՈՐԱՎԵՊ)

Մութ գիշեր մը, մեծ թիկնիին մէկ ուստին կախուած լապտերի մը աղօտ լոյսովը նստեր էինք պարտէզին մէջ, Գասպարին հետ:

Բան մը ըրած ըլլալու համար սիկառ մը վառեցի և բան մը խօսած ըլլալու համար ամուսնացած կնոջ մը դայթակղական ընթացքին վրայ խօսեցայ՝ ինչ որ ընդհանուր խօսակցութեան նիւթ եղած էր այն օրեր:

Լակոնական էին բարեկամիս պատասխանները և կը կարծէի թէ ատոնց չնշտին մէջ նշմարած յուզումն իմ երեւակայութեանս արդիւնքն էր պարզապէս, եթէ ճիշդ նոյն պահուն՝ երբ ան ալ իր կարգին սիկառ մը կը վառէր՝ լուցկիին բոցը իր դէմքին անոտ վոր կարմրութիւնը ցոյց չտար ինծի:

— Ի՞նչ է, Գասպար, սխալ տեղ դարկի արդեօք, միթէ տիկնին Գոսեան ալ աղգականներուդ անթիւ համաստեղութեան մէջ կը գտնուի:

— Պահ, ենթադրենք թէ այնպէս ըլլայ, չես բամբասեր կոր զինքը, այլ իրողութեան մը վրայ կը խօսիս կոր:

— Ուրեմն...

— Ո՛հ, խորհի՛ր թէ այդ լկտի արարածը կրնար կինս ըլլալ, մտածե՛ր թէ Ատրինէս զիս չճանցած կրնայի անոր տուած ըլլալ անուանըս... Ըսէ՛, դուն իմ տեղս չպիտի՞ յուղուէիր քիչ մը, այսօր այդ կնոջ խեղճ ամուսնոյն տեղ ըլլալու անցեալ հաւանականութեան վրայ խորհելով:

— Կանոնակ չէ՞ ըրածդ:

— Ո՛չ, ընդհակառակը շատ լրջօրէն կը խօսիմ, բարեկամս:

— Ինչպէ՞ս սակայն, ի՞նչ պարագաներու մէջ:

— Տղայութեան ընկերուհիս եղած է Տիկին Գ... Միասին մեծցած ենք գրեթէ: Այն ատենէն իսկ չարաճճի աղջիկ մըն էր, թէև ես շատ ետքերը կռահեցի ատիկա. և

սքանչելիօրէն դեղանի—հիմակուճնէ բիւր անգամ աւելի դեղանի—իր խարոհալ մազերով, ծաւի աչքերով և մորթին կաթիլ քնքուշութիւնով: Իրենց պզտիկ տանը մէջ նեղուած՝ միշտ մեր ընդարձակ պարտէզը կը նետէր ինքզինքը ու ժամերով մինակնիս կը վազվզէինք, կը ցատկոտէինք կը նստէինք, կը քնանայինք: «Ելիր պտուղ քաղէ ինծի սա ծառէն» կ'ըսէր ու կ'ելէի: Ո՛հ պզտիկ չարաճճին, երբ որ և է փոքրիկ բանի մը համար վշտացնէի զինքը «պա՛գ զիս որ հաշտուիմ» կ'ըսէր կեռասէ աղուոր չրթունքները ինծի մօտեցնելով. ես արդէն ամէկտա՛ կը կարմրէի և սակայն կը հնազանդէի իրեն: «Ես ինքս պիտի քաղեմ պա պտուղը, ո՛հ, զրկէ ու վերցուր զիս» կ'ըսէր երբեմն. թեև աղուոր մէջքին շուրջը անցուցած վեր կ'առնէի իր ճոխ մարմինը ամբողջ. և մինչ ան լեցուն կուրծքերը կը բերէր կոթնցնել գլխուս՝ տարօրինակ ու ամօթխած հեշտանք մը կը զգայի ներսիդիս, առանց ինչ ըլլալը հասկնալու. սակայն յետոյ երբ վար կը դնէի զինքը հեւալով «Ու՛ֆ, չա՛ր, ցաւցուցիր մէջքս» կ'ըսէր սպառնական քմծիծաղով մը, աչքերը աչքերուս մէջ սեւեռած:

Օր մը, շատ լաւ կը յիշեմ, երբ պատուհանը նստեր էի—«Մինակ կը նեղուիմ կոր, եկո՛ւր խաղանք» ըսաւ ինծի դիմացի տունէն: Ելայ դացի: Դեռ հազիւ 12—13 տարեկան կայինք. երկուքս ալ այն ատեն: Իր ննջասենեակը տարաւ զիս ու քիչ մը նստելէ ետքը «Տե՛ս, ըսաւ, կը մօռնայի կոր. պէտք է որ toilette ընեմ, իրիկուան պտոյտի պիտի երթանք».—«Ուրեմն ես մեկնիմ» ըսի՝ ոտքի ելլելով: Զարմանքով երեսս նայեցաւ: «Վայրենի, ըսաւ, քեզի ի՞նչ արդուղարդէ՛ս, նստէ՛ կր խօսինք միեւնոյն ատեն»։ Իմ մըտածումովս ատիկա տարտամօրէն տարօրինակ կը թուէր ինծի և սակայն քանի որ ինք այնպէս կ'ուղէր... նստեցայ: Հայելիին առջև անցաւ. forսածը հանեց վրայէն, մարմնոյն կաթի սպիտակութիւնը, քնքուշ թեւերուն թարմութիւնը ու պրօշկ չափիկին ծափիկներէն պոքթկացող կուրծքին հմայքը կը շողային հայելիին մէջ: Գօրսէի մը մէջ սեղմեց

մէջքը ու «կապէիր քիչ մը սա քօրսէս» ըսաւ ինծի: Եւ երբ շուարուն ձեռքերով քօրսէին լարը կապած պահուս գաղտադողի տկնարկներ կը նետէի հայելիին, տեսայ որ գոհունակ ժպիտ մը կար դէմքին վրայ իմ հնազանդ հաճոյակատարութեան հանդէպ: Շրջադրեալ տին մէջքը կոճկել տուաւ ետքը ինծի ու այն ատեն. «Պաշտօնդ վերջացաւ, ըսաւ, և ատոր փոխարէն... յարեց ծոծորակը ցոյց տալով, հրաման կուտամ սրտեղս պահելու»:

Դողալով դրեթէ կատարեցի հրամանը: «Գոհ ես» հարցուց:— «Այո՛, ըսի, չա՛տ...»: Խնդաց: «Եթէ զիս առնելու ըլլամ, ըսաւ, ամէն օր իրաւունք պիտի ունենաս այդ պաշիկը առնելու, հէ՛... կառնե՛ս յիս, ըսէ՛, աղուոր չե՛մ...»:— «Անշուշտ, չա՛տ...» Թօթովեցի «Բսէ՛, յարեց Թեւերը վիզս անցնելով, ըսէ՛, կը խոստանա՞ս, ուրիշը չպիտի առնես»: Չկրցայ պատասխանել քանի մը վայրկեան, ահաւոր տարտամութիւն մը գրաւած էր սղու միտքս: «Է՛, ինծի նայէ տեսնեմ, չխօսի՞ս, ա՛յո կամ ոչ, կը խոստանա՞ս...»: Աչքերս վեր առի, աչքերուն մէջ կայծ մը կար զոր չէի կրնար կոր տարրալուծել և որ սակայն տակնուվրայ ըրաւ, փոթորկեց զիս. կիսամերկ չքեղ մարմինը դէպի ինծի հակած էր, հրաշակերտ կիսամոռիի մը պէս, հարցումը ալ աւելի շեշտելու համար: «Այո՛» Թօթովեցի ճիգ մը ընելով ինքզինքիս վրայ: «Ապրի՛ս... աղուոր աղա՛ս, շատ պիտի սիրեմ քեզ, պա՛գ զիս, բայց մարդու բան չըսես հա՛...»:

Երբ տուն դարձայ, զղջացի խոստացած ըլլալուս. որովհետեւ, շատ պղտիկուց խոստացուած բան մը, ինչ ալ ըլլայ, կատարելու պարտականութիւնը ներշնչեր էին ինծի և կը խորհէի թէ լո՞ւչ պիտի ընէի եթէ ծնողքս չուզէին ետքը ինծի առնել Չարուհին: Խոստացեր էի սակայն, լմնցեր էր. կրնայի խոստումս ետ առնել:

Անկէ ետքը ա՛լ աւելի պչրոտ ձեւ մը առաւ Չարուհին ինծի հանդէպ. կը հրամայէր ինծի պարզապէս ապագայ կենակցուհի իրաւունքով և ես, վախկոտ ու հեզ սղայ, կը հնազանդէի իրեն կուրօրէն:

Տարի մը ետքը զիս գիշերօթիկ վարժարան զրկեցին Իգմիր: Կը սպասէի որ մեկնած ատենս Չարուհին խոստումս յիշեցնէր ինծի. այնպէս չըրաւ սակայն. «Կ'երթաս կոր, հէ՛... ըսաւ, էհ, եկու պագտուինք աղուորս»: Եւ կուշտ ու կուռ համբուրեց զիս:

Չորս տարի դպրոցը մնացի, հետզհետէ քանի չափահաս կ'ըլլայի՝ աւելի լրջօրէն կը ստիպուէի խորհիլ խոստումս վրայ. եւ որքան լրջօրէն նկատի առնէի խնդիրը՝ այնքան ուղեղս կը չարչրկէր ան. պէ՛տք էր իրապէս խոստում մը նկատել զայն թէ ոչ: Չարուհիին վարմունքը աչքիս առջև կը բերէի ամէն անգամ և կ'ըսէի ինքնիրենս որ, եթէ իր բոլոր ըրածները անգիտակից աղու անմեղ պչրանքներ էին, այդ քնքուշ էակը կրնար կեանքի ընկերուհի մը ըլլալ ինծի, բայց հակառակ պարագային—ինչ որ ենթադրել կուտային իր անմոռանալի չարածճի քմծիծաղները—ո՞վ կ'ըսէր թէ մինչև հիմա տասը հօգիի հետ ալ նոյն կատակերգութիւնը չէր խաղացած:

Մօրս գրած նամակներուս մէջ իր բոլոր ընտանիքին հետ Չարուհիին ալ բարեւներ կը դնէի միշտ ու մայրս ալ կը փոխադարձէր զանոնք իրեններուն մէջ: Վերջին տարին իր ամուսնութիւնը իմաց տուին ինծի և երբ դարձայ՝ Չարուհի երկու ամուսնոր հարս էր արդէն:

Մեզի անծանօթ մէկու մը հետ ամուսնացուցեր էին զայն: Առաջին անգամ զինքը տեսնելուս, գեղեցկութիւնը իր գեներթին հասած՝ այնքան գրաւիչ հանդամանք մը տուած էր անոր որ պարզապէս համոզուեցայ թէ գանձ մը կորուսեր էի անոր մէջ:

Հիմա, սակայն, կեանքը ապրիլ ակսած երիտասարդի հեռատեսութիւնս կ'ըսէր ինծի թէ աշխատելու էի գէթ թանկագին ցոյքեր գողնալ այդ աղամանդէն որ ատեն մը—երբ արժէքին անգիտակ էի դեռ—իմ տրամադրութեանս ներքեւ դրուած էր բացարձակապէս:

Եւ սկսայ ամուսնոյն հետ բարեկամութիւն մշակել իրենց տունը երթեակելու համար: Հիմա առաջուան Չարուհին չէր ա՛լ, լուրջ

հով մը, պատկառանք մը կար վրան՝ ինչ որ մէկ խօսքով պաշտելի կ'ընէր կոր զինքը աչքիս, ու եթէ երբեք մտքիս մէջէն տարտամօրէն բան մը կը յուսայի այս կնիկէն, ապահովաբար մեծ զոհողութիւններէ, պաղատանքներէ, անցեալին վերյուշումովը արդարացուած խորունկ սիրոյ մը արտայայտութենէն և երկար սպասումներէ ու տառապանքներէ ետքը, արգահատանքով, դըթալով նետուած ողորմութեան պէս բան մը պիտի ըլլար ան, կ'երազէի ես, ու այդ ամէնը յանձն առնել կ'որոշէի իր կնոջական մէկ փոքրիկ շնորհին համար:

Հետզհետէ կ'ամրապնդուէր սա համոզումս թէ զուտ մանկական անմեղ պէրանքն էր առջի Զարուհին ըրածը ու հիմակուան Տիկին Ք. ան ճշմարիտ ու կատարեալ կնոջ տիպարն էր, պարագային համեմատ միայն խնդացող, խօսող և ի հարկին լուրջ ու պատկառելի:

Իր ամուսնոյն հետ ծանօթանալէս յետոյ երբ առաջին այցելութիւնս գացի տալու իւրենց, պատահաբար ամուսինը բացակայ զբոսնուեցաւ ու Տիկինը ընդունեց զիս: Կէս ժամ զիս սպասցնելէ յետոյ հիւրանոցին մէջ, բայց մանկակազոյն robe de chambre մէջ, կէս négligé վիճակով մը եկաւ ներս ու դիմացս նստեցաւ:

— Կը ներէք որ, ըսաւ, առաջին այցելութեան մը մէջ պէտք եղած պաշտօնական քրդողարդով չեմ ընդունիր ձեզ. բայց կարելի եղածին չափ շուտ գալու հապճեպս նկատի առնելով՝ ատիկա ներելի կը դառնայ, մանաւանդ մեզի պէս հին բարեկամներու միջև:

— Անշուշտ, Տիկին, պատասխանեցի, մանաւանդ որ Նախախնամութիւնը ինք ստանձնեմ է արդէն ձեր արդողարդին հոգը:

— Օհօ, կը տեսնեմ որ առջի չիկնոտ Դասպարը չե՛ս ալ:

— Կ'աղաչեմ, Տիկին, ըսի, յօնքերս պոքստելով այդ չափազանց մտերմական խօսուածքին վրայ, ներողամիտ եղէք՝ եթէ անհաճոյ վարմունքի մը մէջ գտնուեցայ:

— Մի՛ ո՛չ, այդ որքա՛ն ձեւակերպութիւն ընդհակառակը. սանկ քովս չգա՞ս. մոռցա՞ր առջի Զարուհին, աչքերուս մէջ չնայի՞ս...

Գլուխս վեր առի. իրաւ մոռցեր էի ես առջի Զարուհին. նայուածքս իրենին պատահեցաւ. բազմոցին մէջ, յուօրէն, կէս մը ընկողմանած տարփոտ նայուածքով մը կը ժպտէր ինծի իր հին չարածրի քմծիծաղովը՝ որուն մէջէն մոռցուած հին աղջիկը—հիմա իր կնոջ դերին մէջ ա՛լ աւելի արգալի—երեւցաւ յանկարծ աչքիս ու փախայ, ամէկոտ, անփորձ տղու մը պէս փախայ:

Մէկ նայուածք մը՝ հիւսած բոլոր երազներս փճացուցեր էր:

Երջանիկ եմ հիմա որ ինձմէ տղու միամիտ խոստում մը խելէ յետոյ, ինծի սպասելու համբերութիւնը չունեցաւ այդ կինը, եթէ ոչ՝ կեանքս անդառնալիօրէն թունաւորուած պիտի ըլլար հիմա:

Այս դէպքէն ետքը, քանի անգամ փոքրիկ նախատինքներ ըրաւ ինծի ընկերութեանց մէջ, բայց լռութեամբ պատասխանեցի:

Սեղճ ամուսնոյն կ'արգահատիմ. լոկ անձնախորական նկատումներով իրեն հետ սկսած բարեկամութիւնս, այդ արգահատանքով հետըզհետէ ամրապնդուած է հիմա և ծնունդ տուած է մէջս իրեն օգտակար ըլլալու բազմանքի մը որ սակայն—աւա՛ղ—անօգուտ է պարզապէս:

Եւ երբ բարեկամս մինակ ձգեց դնաց զիս, պարտէզին մթութեան մէջ, լապտերին երերտըկացող աղօտ լոյսովը, խորհեցայ ինքնիրենս թէ կնոջ աչքը մեզ այրերուս համար հայելի մըն է՝ որուն վրայ կը յաջողին իշխել անոնք շատ անգամ, զմեզ իրենց ուղածին պէս ցոյց տալու համար ինքզինքնուս:

ՓԱՅԼԱԿ

ՀԱՇՈՒԱԿԱՆ

Թերթիս 1903 տարեշրջանի ութերորդ ամիսը կը լրանայ այսօր և տակաւին քանի մը գաւառային գործակալներու հետ առկալս հաշիւ ունինք, ինչպէս նաև գործակալ չի գրտնուած քաղաքներու բաժանորդներէ՝ ուղղակի պահանջք, որոնց ամբողջութիւնը անկարելորդ դուժար մը չէ որ կը կաղմէ: Այս

վերջիններէն, — գործակալ չի գտնուած տեղերու բաժանորդներէն, — իւրաքանչիւրին մասնաւոր նամակ ուղղելը երկար աշխատութիւն ըլլալով, հարկադրուած ենք ներկայ հրապարակային հրաւերով խնդրել անոնցմէ որ փութան իմբագրութեան հասցնել իրենց տարեկան բաժանորդագինը կազմող փոքրիկ գումարները, որուն համար չ'արժեր որ Մասիսի նամակատուին միջոցաւ անուանական կերպով աղբարարենք իրենց: Կը յուսանք թէ մեր հեռաքնակ գրասէր ընթերցողները ազնուութիւնը պիտի ունենան ի դերեւ չի հանելու և չարաչար չի գործածելու (abuser) այն վստահութիւնը որով 35 շաբաթ կանոնաւորապէս թերթ ղրկած ենք իրենց: Գոհացում տալով իրենց կողմէ յայտնուած փափագին, առանց խտտապահանջ ըլլալու բաժանորդագրութեանց կանխիկ վճարման սկզբունքին վրայ:

Միեւնոյն րանը կը խնդրենք մեր այն գործակալներէն, — քարերաղբաբար սակաւաթիւ — որոնք զանազան առարկութիւններով տակաւին կը յապաղեցնեն իրենց հաշիւներուն կարգադրութիւնը թերթիս հետ:

“ՄԱՍԻՍ”Ի ՎԵՊԸ

Զիֆթէ-Սարաֆ որ առաջինը եղաւ Բօլ Պուրթէի մէկ վէպը հայերէնի թարգմանող, զոր հրատարակեց առանձին հատորով, առաջինը կ'ըլլայ նաև Հէնրիք Սենքիէվիժի մէկ վէպը հայերէնի թարգմանող, — այս անգամ Մասիսի համար: Երկուստարդ գրագէտը, որ ներկայ տարեշրջանին մէջ ալ աշխատակցութեան կարեւոր բաժին մը նուիրեց մեր շաբաթաթերթին, իր գրական գեղեցիկ յօդուածներով և յուզած ընկերային — ընտանեկան ծանօթ հարցովը, Բոլոնիացի աշխարհահռչակ հեղինակին հետաքրքրաշարժ մէկ վիպասանութեամբ օժտելով Մասիսը՝ նոր հրապոյր մը կուտայ անոր բովանդակութեանը, որուն համար հրապարակաւ կը յայտնենք իրեն մեր շնորհակալութիւնը:

“ԼԻԼԻԷՆ ՄՕՐՐԻՍ,”

Այս է անունը՝ Սենքիէվիժի վէպին, զոր պիտի սկսինք հրատարակել յառաջիկայ շաբաթէն, Մասիսի իւրաքանչիւր թիւի վեր-

ջին չորս էջերը յատկացնելով անոր կանոնաւորապէս: Վերին առաջնան յուզիչ, շահեկան ու արկածալից պատմութիւն մըն է անիկայ, որուն գործողութիւնը կ'անցնի Հիւսիսային Ամերիկայի մէջ, իբր կէս դար առաջ: Զմայլելի պատկերներ ունի, վարպետի գրչով նկարագրուած, որոնք կը ներկայացնեն ոսկեհանքերու երկիրը՝ Գալիֆօրնիան և Նոր Ալիսարհի այժմու ծաղկած ուրիշ քաղաքները ա՛յն թուականին ուր ամալի էին տակաւին. և արկածալից գրուաբաններուն, որոնք ժիւլ Վէռնի վէպերը կը յիշեցնեն, կը խառնուին զուտ սիրային վէպի մը փափուկ ու հոգեյոյզ էջերը:

Ոչ միայն գրասէր դասակարգին, այլ անխըտիր ամէն ընթերցողի և ընթերցուհիի հետաքրքրութիւնը գերադանցապէս շարժելու բնութիւնը ունի

“ԼԻԼԻԷՆ ՄՕՐՐԻՍ,”

զոր կարգացողները պիտի տեսնեն թէ ամերիկեան այն առասպելային միլիոնները, ճոխութիւնները, ի՞նչ զոհողութիւններով ու պայքարներով ձեռք բերուած են:

Արդէն, «Quo Vadis»-ի հեղինակին անունը կը բաւէ՝ որ աւելի բան մը չըսենք մեր կողմէն: Այս քանի մը տողերն ալ, դադախար մը տալու համար մեր հրատարակելիք վէպին վրայ, ընդհանուր կերպով:

ՆՇԱՆԱԿՕՍՈՒԹԻՒՆ

Հաճոյքով կը ծանուցանենք Նշան էֆ. Կեսարեանի նշանախօսութիւնը Օր. Ատրինէ Արսէնեանի հետ, քեռորդի Յովհաննէս էֆ. Գարակէօզեանի, որ անցեալ կիրակի օր կատարուեցաւ ի Մէսարսրնու, Գարակէօզեանց ընտանեացին մէջ:

Կեսարեան եղբայրները՝ ծանօթ են իրենց առեւտրական գործունէութեամբ ու ընկերային ձիրքերով, և Օր. Ատրինէ Արսէնեան՝ իր անձնական յատկութեանց կը միացնէ խնամեալ դաստիարակութեան մը առաւելութիւնը, որով այս նշանախօսութիւնը ողջունուեցաւ անկեղծ շնորհաւորութիւններով՝ Կեսարեան, Արսէնեան և Գարակէօզեան ընտանիքներուն ուղղուած:

Արսօմաք Կ. Մ. ԻԻԹԻԺԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՆԵԱՆՔ Օրագրի

ՎԻՆՆԱԿԱՆ ՄԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի Բ Ա Ն Կ Ա Լ Թ Ի

477դ Տ Ա Ր Ե Ծ Ե Ջ Ա Ն

Վարժարանս հաստատուած է 1857ին. նպատակն է՝ աշակերտաց տալ կրօնական, բարոյական եւ գիտական կրթութիւն մը: Վարժարանի վարչութիւնը՝ Վիեննայի Միթթարեանց ձեռքն է: Ուսուցչական մարմինը (corps enseignant) որ կը բաղ կանայ Միաբաններէ եւ վկայեալ աւսաբիւն ուսուցիչներէ, պիտի կազմեն այս տարի 24 հոգի: Ուսմանց ծրագիրն է՝ աւրի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne) յատուկ յառաջադիրը. որ կը համապատասխանէ գերմանական բնական դպրոցին (Realschule) յառաջադիրն. բայց ըստ կարի յարմարցումով է այս ծրագիրը միջավայրի պիտոյից: Վարժարանին կատարեալ ընթացքն աւարտող աշակերտները կրնան շատ դիւրութեամբ եւ առանց բնութեան եւրոպայի ո եւ է բարձրագոյն վարժարանն յաճախել՝ ուսմունքը շարունակելու համար (ինչպէս ունինք աշակերտներ ի Վիեննա, Չուիցերիա եւն.) եւ կամ կրնան վաճառականութեան ձեռնամուխ ըլլալ: Աւանդուած լեզուներն են՝ Հայ. Տէկ. Գաղղ. Գերմ. եւ Անգլ. (վերջին 2 տարիները): Գաղղիերէն լեզուն գործնականապէս սորվելու համար՝ աշակերտները պարտաւորեալ են միշտ նոյն լեզուն խօսելու, եւ իրենց վրայ պիտի հսկեն զաղղիացի Մարխսդներ, զորոնք յաշկապես բերել տուալ վարչութիւնն Բարիկեն: Այս տարի 5 պիտի ըլլայ ասոնց թիւը: Ամէն ամիս ծնողաց կը զրկուի համեմատական ամսացուցակ մը, որուն մէջ մանրամասն կը նշանակուի աշակերտին բարոյական եւ ուսուցչական վիճակը, իւրաքանչիւր դասի մէջ առած նիշերը եւն.: Վարժարանս կը գտնուի ընդարձակ ծառայից պարտէզի մը մէջ. ունի իր յատուկ բժիշկն ու դեղատանը: 1903 1904 դպրոցական տարին պիտի սկսի Սեպտեմբեր 1/14 Բջ. օրը: Դպրոցամուտի քննութիւնները պիտի կատարուին Օգոս. ամսոյն 29ին եւ 30ին, իսկ դասերը կը սկսին կանոնաւորապէս Երկուշ. օրը Սեպտ. 2ին: Հրատարակուած է վարժարանի 5րդ տեղեկագիրը: Վարժարանին նկատմամբ ընդարձակագոյն տեղեկութիւններ ուզողը թող՝ դիմէ վարժարանի վարչութեան:

Թոշակ տարեկան ամենայն ծախիւի գիւեթօրիկներու համար 30 օսմ. ոսկի

» տարեկան ամենայն ծախիւի գիւեթօրիկներու համար 20 օսմ. ոսկի
» տարեկան ամենայն ծախիւի տրսաբիւններու համար 10 օսմ. ոսկի
Վարիչ

Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ՄԷՆԵՎԻՇԻԱՆ

Կ. Պոլիս, Բանկայի

P. GABRIEL Dr. MENEVICHIAN

Constantinople, Pancaldi

ՄԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԳԱՏԵԳԻՐԴ

Գաղղիւղի Միթթարեան վարժարանը պիտի բացուի Սեպտ. 2ին (ըստ Ն. Տ. Ի): Դպրոցին դիրքը հիանալի է, ծովահայեաց, օդաւէտ. դասարանները լուսաւոր են եւ ընդարձակ ըստ բաւականի: Ստալե կը հսկուի տղայոց բարոյականի, կրթութեան ու առողջութեան վրայ: Կ'ուսուցուին Հայերէն, Թուրքերէն, Գերմաներէն, Գերմաներէն, Անգլիերէն ու Իտալերէն լեզուները, իմաստասիրութիւն, քնարանութիւն (Physique), քնարութիւն (Chimie), Հաշուաւորութիւն (Comptabilité), Երկրաչափութիւն, Գրաւհաշիւ, Թուաքանութիւն, Բնական Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Պատմութիւն, Մատենագրութիւն, Եւայրն. Գծագրութիւն, Գեղագրութիւն, Մարմնամարզութիւն, Զայնական եւ Գործիական երաժշտութիւն:

Վարժարանին աշակերտներէն անոնք որ քաջ ու ընտիր կը հանդիսանան ուսմանց ու բարի վարքի մէջ, կ'անցնին յետոյ Վենետիկի Մուրատ-Ռափայէի տան վարժարանը, եւ եթէ հոն ալ քաջ հանդիսանալով ուսմանց ու բարի վարքի մէջ՝ արժանաւոր դատուին, կրնան յաճախել քաղաքին Ակադեմիան ու բարձրագոյն վարժարանները եւ կամ կը զրկուին Իտալիոյ եւ ուրիշ երկրներու համալսարանները:

Վարժարանին տարեթոշակն է 25 օսմ. ոսկի. կարօտ ընտանիքներու համար միայն, զիջողութիւն ընելով, 15 օսման. ոսկի. անկէ նուազ թոշակով աշակերտներ չեն ընդունուիր:

Աւելի մանրամասնութեանց փափաքողք կրնան դիմել ուղղակի Մօտայի (Գաղղիւղ) Միթթարեան վարժարանի Տեսչութեան:

Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՐՈՍ

ԾԱՆՈԹ.— Զրինեալն թիւը արդէն իսկ լեցած ըլլալով, այս տարի այլ եւս չի աշակերտ չպիտի ընդունուի բնաւ: Վարժարանին չէնք ալ նորոգուած եւ աւելի ընդարձակուած է այս տարի:

ԲՐՈՓ. Յ. Յ. ՄԱՆԻՍԱՃԵԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

59 ՊԱՏԿԵՐ ԵՒ 12 ԲԱՐՏԷՍ

Անաթօլիա Գօլէճի Բնական Դիտութեանց ուսուցիչ Բրոֆ. Յ. Յ. Մանիսա-
ճեանի աշխատանքները այս ընդարձակ դատադիրքը Աշխարհագրութեան ճիւղին
ամենէն ճոխ եւ գեղեցիկ գործ մ'է որ պատրաստուած է մեր վարժարանաց միջին
եւ բարձրագոյն դասարաններու դորձածութեան համար : 200ի մօտ մեծագիր երես-
ներէ բաղկացեալ սոյն դասադիրքը կը սկսուի սկիզբէ 59 մեծ ու փոքր պատկերներ
եւ 12 քարտէսներ որք մասնաւորապէս պատրաստուած են ըստ վերջին աշխարհ-
հաղորտեան փոփոխութեանց :

Մասնաւոր խնամք եւ ընդարձակութիւն արուած է Թուրքիոյ աշխարհա-
գրութեան , ինչ որ այս հրատարակութեան ամենէն գերադանց մասերէն մէկն է :
Ոչ նուազ կարեւոր են նաեւ գործին վերջն աւելցուած շատ մը վիճակագրական
եւ այլ ցուցակներ, որ անհնաժեշտ են մասնաւորապէս լրագիր կարդացողներու համար :

Կեդրոնացեալի՝ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը

Թիւ 27, Ֆինանսներու եօզուշու , Կ. Պոլիս

Եւ հեղինակին քով ի Մարզուման

Ընտր եւ զօրաւոր լաթակազմ

Գին 14 դր.

ԱՓՕՍԹՕԼԻՔ ԻՆՍՏԻԹՒԹԻՒԹ Ի ԳՈՆԵԱ

(ՃԷՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանս կ'աւանդէ՝ Թուրքիոյ մէջ գտնուող Կմերիկեան միւս գոլէճներուն յար եւ
նման ծրագրով մը՝ Հայ. Օսմ. Անգլ. , Ֆրանս. , եւ Յուն. (Յունաց համար) լեզուներ, նաեւ
ընական, բնապատմական, ուսողական, փիլիսոփայական եւն. գիտութիւններ. իսկ իբրեւ
արուեստ կ'ուսուցանէ կահադործութիւն, լուսանկարչութիւն եւ ջութակահարութիւն :
Բաց աստի յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ պիտի հաստատէ 3 տարուան ՎԱՃԱՌԱԿԱ-
ՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ մը ուր մասնաւոր խնամքով պիտի դասախօսուին գործնականապէս
առեւտրական աշխարհ. , Թուաբ. , տնտեսականութիւն. , օրէնսգիտութիւն , վաճառականական
եւ սեղանաւորական գործողութիւններ , պաշտօնական եւ ոչ-պաշտօնական ամէն տեսակ
գրութիւններ՝ Հայ. , Օսմ. , եւ Ֆրանսերէն լեզուներով եւն. եւն. եւ սոյն ճիւղին աշա-
կերաները ստիպեալ չպիտի ըլլան գոլէճական միւս դասերուն հետեւելու : Տարակոյս չի-
կայ թէ այս նորութիւնը որ կը պակսէր մեր մէջ՝ մեծ օգուտներ պիտի ընծայէ հասարա-
կութեան : Դիչերօթիկներու դպրոցական տարեթոշակն է միայն 10 օսմ. ոսկի. նոր տա-
րեշրջանը պիտի սկսի սեպտ. 11/24ին : Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել
առ Տնօրէնն Վեր. Տքդ Ա. Յ. Հայկազեան ի Գոնեա :

6-6

Կ. Յ. ՏԵԽԵՐՄԵՆՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից ,
սպազդական գործերու պատրաստութեան
հոգը :

Դիւն ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մամուր եւ արագ գործօճեկութիւն

Արժէք կանխիկ. 50%ի զեղչ :

Մանօթ վաճառականաց , ապառիկ .

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն
մասամբ :

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԽԵՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՐԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանօթ շաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իրրեւ Բաքիսրոյի եւ թէ՛ իրրեւ շաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները: Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. շաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա, Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101,

11-30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՂԱՍԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ զիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

- | | |
|--|---|
| <p>ՍԻՆԿԵՐԻ
ՀԱՅԹԱՅԹԻՉ
ՊԱՂԱՍԱՆ</p> | <p>ԲԵՐԱ. } 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.</p> |
| | <p>ԿԱՂԱՍԱՆ. } 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամկէլին կայարանին դէմ.</p> |
| | <p>ՊԱՂԱՍ. } 1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիտ, Թրամկէլի կայարանին դէմ, Թ. 13.</p> |
| | <p>ԱՆԻՒՏԱՐ. } 2արշը Պօյու, Թ. 120.</p> |

Դասերը եւ նորոգութիւններ.

Կատարելալ երաւիքաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԳՍ ԼՈՒԻՏԵ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. Ընդդեմ հրդեհի (Ի ԳԱՐԹԱՎԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Ծովային ապահովագր. ԸՆԿ. (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամապուճն է ի Կ. Պոլիս, Քոնսթ. Լիօնէ
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօթուլօ խան, Թ. 52—53—54—55—56

Ն ՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան գեղեցիկ ապագրութեամբ
հրատարակուած

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳԱՂԻԵՐԻՆ--ՀԱՅԵՐԻՆ

Գ. ՆԱՐ-ՊԵՅԻ

Գին երկու հատորին միասին դահկ. 120

Վաճառման կեդրոնացեղին է

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Ղալաթիա Սեղաթ խան Թիւ 5

6—10

ՀԱՅՈՒՇԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Վարժարանիս նոր տարելըջանը պիտի
սկսի Սեպտ. 9ին. (Ն. Տ.), Զօրեքշաբթի:
Դիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ.
ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. 10
սկիզբը. միւս կէսը Յունուարի մէջ: Դաշ-
նակի դաս առնողները 3. իսկ երգչոցնի դաս
առնողները 1½ ոսկի աւելի կը վճարեն:

Կէս տոմսակով Ատաբազար ուղեւորելու
եւ ուրիշ դիւրութեանց համար՝ կարեւոր է
որ վարժարանին գիշերօթիկ աշակերտուհի-
ները ինչպէս նաեւ յառաջիկայ տարելըջանին
նոյն վարժարանին աշակերտիլ փափաքող
օրիորդները, իրենց անունները շրկեն՝ եւ
կամ անձամբ կամ իրենց պաշտպանին միջո-
ցաւ ներկայանան՝ Մր. Ու. Ու. Փիթի, Թիւ

5, Ամերիկեան խան Կ. Պոլիս մինչեւ Սեպտ.
4, (Ն. Տ.):

Վարժարանին յայտագիրը ուղղորդու
ծրի կը շրկուի: Ուրիշ տեղեկութեանց հա-
մար գրել Տոքթ. Ս. էֆ. Դավալճեանի,
Ատենապետ խնամակալութեան, Ատաբազար:

ՌՈՊԷՐԴ ԲՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարելըջանը
պիտի սկսի Սեպտ. 2/15: Կարգադրութիւն-
ներ եղած են նոր դիւրութիւններ տալու
վաճառականական ուսմանց համար: Մնայուն
բժիշկ մը՝ աշակերտներու առողջութեան,
մարմնամարզներուն ու խաղերուն, ինչպէս
նաեւ վարժարանին ընդհանուր առողջապա-
հական վիճակին վրայ կը հսկէ: Նախորդ
տարուընէ սկսեալ՝ բացուած է նաեւ փոքր
տղոց յատկացեալ նոր շէնքը, ուր կ'ընդուն-
ուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ:
6—12

ԼԵԻՈՆ Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վկայեալ Բարիգու բժշկական վարժարանէն

Նախկին chef de clinique Ֆրանսայի
Ատամնաբուժական Վարժարանին: Կ'ընդունի
ամէն օր իր բնակարանը՝ Բերա, Մեծ-փողոց
Թ. 407 (Նանիի դարեղատան դէմ):

6—10